



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 1117-Ա/Ք

«10» 10 2011թ.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0202 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի N 8 արձանագրային որոշման 14-րդ՝ «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգին ու գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» կետը, ՀՀ ԿԳ նախարարի 2009թ. մայիսի 12-ի «Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և ուսումնամեթոդական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն տալու նպատակով ստեղծվող ոլորտային հանձնաժողովների կազմը՝ ըստ մասնագիտական խմբերի հաստատելու մասին» N 445-Ա/Ք հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովություն» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:

2. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովություն» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկման նպատակով ուսումնական հաստատություններում ներդնել 2012թ. սեպտեմբերի 1-ից:
3. Նախարարության աշխատակազմի նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության վարչությանը մինչև 2011 թվականի դեկտեմբերի 30-ը հաստատման ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը, որոնցում փորձարկման նպատակով ներդրվելու է 0202 «Սոցիալական ապահովություն» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը:
4. Կրթության ազգային ինստիտուտի տնօրենին /Ն. Ղուկասյան/ ապահովել չափորոշիչի փորձարկման ընթացքի վերաբերյալ ուսումնական հաստատություններից վերլուծական հաշվետվությունների ստացումը:
5. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:



Ա. ԱՃՈՏՅԱՆ

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0202 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչը սահմանում է միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության՝ Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի «Մենեջեր (կազմակերպիչ)» որակավորմանը ներկայացվող պահանջները, հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսանողների ուսումնական բեռնվաճառության նվազագույն և առավելագույն ծավալները:

2. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝

- 1) առկա,
- 2) հեռակա,
- 3) դրսեկության (էքստեռնատ),
- 4) հեռավար (դիստանցիոն),

3. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

- 1) կրթության առկա ձևով՝
ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 2 տարի,
բ. հիմնական կրթության հիմքով՝ 3 տարի:
- 2) կրթության հեռակա ձևով՝
ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 3 տարի:

3) դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշման:

4. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվաճառության նվազագույն ծավալը 2304 ժամ է, առավելագույն ծավալը՝

4428 ժամ: Հիմնական ընդհանուր կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

ԳԼՈՒԽ 2.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0202 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության «Մենեջեր (կազմակերպիչ)» որակավորմամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

1) Մենեջեր (կազմակերպիչ)՝ սոցիալական աջակցություն տրամադրող կազմակերպության:

2) Մենեջեր (կազմակերպիչ)՝ սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների:

3) Մենեջեր (կազմակերպիչ)՝ սոցիալական աշխատանքների գծով առողջապահության բնագավառի:

4) Մենեջեր (կազմակերպիչ)՝ սոցիալական աշխատանքների գծով կրթության բնագավառի:

5) Մենեջեր (կազմակերպիչ)՝ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերով զբաղվող կառույցների:

6) Մենեջեր (կազմակերպիչ)՝ տարեցների հիմնահարցերով զբաղվող կառույցների:

7) Մենեջեր (կազմակերպիչ)՝ հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող կառույցների:

8) Մենեջեր (կազմակերպիչ)՝ սոցիալական ապահովության պետական ծառայության:

9) Մենեջեր (կազմակերպիչ)՝ սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժինների:

10) Մենեջեր (կազմակերպիչ)՝ զբաղվածության հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների:

11) Մենեջեր (կազմակերպիչ)՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալական ապահովության ստորաբաժանումների:

12) Մենեջեր (կազմակերպիչ)՝ խնամքի ծառայություններ մատուցող կազմակերպությունների՝ անկախ նրանց կազմակերպական-իրավական և սեփականության ձևից:

7. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտությամբ «Մենեջեր (կազմակերպիչ)» որակավորված մասնագետի՝ զբաղմունքների ոլորտում մասնագիտական պարտականություններն են.

1) սոցիալական պաշտպանության տարբեր ենթաուղորտներում (սոցիալական աջակցություն, կենսաթոշակային ապահովություն, ընտանիք, կանայք և երեխաներ, զբաղվածություն, աշխատանք և աշխատավարձ, տարեցներ և հաշմանդամներ) իրականացվող գործընթացների կազմակերպումը,

2) սոցիալական պաշտպանության ոլորտում նորմատիվ իրավական ակտերի կիրարկման վերաբերյալ խորհրդատվության և տեղեկատվության տրամադրումը,

3) սոցիալական պաշտպանության ոլորտի նորմատիվ իրավական ակտերի դրույթների մասին իրազեկման աշխատանքների կազմակերպումը և իրականացումը,

4) սոցիալական պաշտպանության մարմիններում, պետական և ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամներում կազակերպա-կառավարչական գործընթացների ապահովումը,

5) սոցիալական պաշտպանության կարիք ունեցող քաղաքացիների բացահայտումը և նրանց իրավունքների պաշտպանության ծառայությունների մատուցման կազմակերպումը,

6) քաղաքացիներին աջակցության ցուցաբերման ժամանակ (կենսաթոշակների և նպաստների նշանակում, վճարում, կասեցում, վերականգնում, իրավունքների պաշտպանություն, զբաղվածության խնդիրների լուծում և այլն) օրինականության հսկումը,

7) կենսաթոշակային ապահովության նպատակով անձնավորված հաշվառման համակարգի վարման աշխատանքների կազմակերպումը, աշխատանքների իրականացման օրինականության հսկումը,

8) որոշակի գործերին առնչվող իրավաբանական կամ տեխնիկական հարցերով հաճախորդներին խորհրդատվության մատուցումը,

9) փաստաթղթերի ուսումնասիրության կազմակերպումը, դրանց օրինականության ստուգումը և ժամանակին այլ կազմակերպություններին ու քաղաքացիներին առաքումը,

10) դատական մարմիններին հանձնելու համար հայցային նյութերի կազմումը, դատական գործերի հաշվառումը և պահպանումը,

11) բովանդակությամբ կից պարտականությունների կատարումը:

ԳԼՈՒԽ 3.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0202 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

8. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանվում են շրջանավարտին ներկայացվող ընդհանուր պահանջների համաձայն:

9. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է՝

1) ունենա մասնագիտական գործունեության բնագավառի կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու համար պահանջվող ծավալով տեսական ու գործնական գիտելիքներ,

2) դրսևորի աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում գործընկերների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողություն,

3) ունենա որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողություն,

4) դրսևորի մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու և ամբողջության մեջ դիտարկելու, ինչպես նաև քաղաքացիական գիտակցություն ցուցաբերելու կարողություն,

5) ունենա մասնագիտական գործունեության գործառույթները սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու հմտություններ

6) ցուցաբերի իր և աշխատակիցների (առկայության դեպքում) մասնագիտական կարիքները գնահատելու և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարողություն,

7) ունենա մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտում և ինքնուսուցման կարողություն,

8) ցուցաբերի մասնագիտական և ընդհանուր բնույթի անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու, դրանցից օգտվելու և դրանք նպատակային օգտագործելու կամ փոխանցելու կարողություն,

9) ունենա աշխատակիցների (առկայության դեպքում) աշխատանքները կազմակերպելու կամ գործընկերային հարաբերությունները (լիազորության դեպքում) ըստ կարողությունների և մասնագիտացման համակարգելու հմտություններ,

10) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ցուցաբերի ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողություն:

ԳԼՈՒԽ 4.

ՊԱՀԱՆՋՆԵՐ 0202 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ

ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

10. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները սահմանվում են ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների, առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական կարողությունների բնագավառում շրջանավարտին ներկայացվող պահանջների համաձայն:

11. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է՝

1) իմանա ՀՀ Սահմանադրության, տվյալ զբաղվածության բնագավառը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,

2) տիրապետի հայոց լեզվին,

3) հաղորդակցվի առնվազն երկու օտար լեզվով,

տիրապետի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոններին,

5) գիտելիքներ ունենա ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի վերաբերյալ,

6) ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,

7) ցուցաբերի կիրառական տնտեսագիտության հիմնադրույթների, մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքների, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունների իմացություն,

8) իմանա էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությունը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթները,

9) պատկերացում ունենա արտակարգ իրավիճակների մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տեղյակ լինի փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքին և ձևերին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ապահովում է շրջանավարտի կողմից առանցքային հմտություններին տիրապետումը՝ օգտվելով աղյուսակ 1-ում բերված մոդուլներից:

13. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար ապահովում է ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ձեռքբերումը՝ օգտվելով աղյուսակ 2-ում բերված մոդուլներից:

ԳԼՈՒԽ 5.

ՊԱՎԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0202 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

14. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է,

2) ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն,

3) արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) հաստատությունը պետք է ունենա մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական և տեղեկատվական նյութեր (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութեր, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստող այլ նյութեր, ուղեցույցներ:

16. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտային համալիրի: Դրանց հագեցվածությունը որոշվում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների,

բ. օտար լեզվի,

գ. ընդհանուր հումանիտար առարկաների,

դ. անվտանգության և առաջին օգնության,

ե. անհատական համակարգիչների:

2) Սպորտային համալիր՝

ա. մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ:

17. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնական տարվա սկիզբը, առկա ուսուցման ձևի համար, սահմանվում է սեպտեմբերի 1-ը, իսկ հեռակա, դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցման դեպքում՝ համաձայն ուսումնական պլանների,

2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,

3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանզանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,

4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,

5) հեռակա ուսուցման ձևի դեպքում ուսանողների հետ պարտադիր պարապմունքների տարեկան ծավալը առնվազն 160 ժամ է,

6) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամ,

7) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

18. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագրի որոշակի մասի ուսուցումն իրականացվում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաների ձևով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գործնական հմտությունները.

2) պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով.

3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները.

4) պրակտիկաների անցկացումը վարում են արտադրական ուսուցման վարպետները, դասախոսները.

5) ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնասօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում, հաստատություններում.

6) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության մասնագիտության ուսանողների ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնառության ընթացքում բոլոր ուսանողները պարբերաբար ատեստավորվում են, որի նպատակը ըստ սույն չափորոշչով սահմանված կարողությունների տարրերի նրանց ձեռքբերումները հավաստող վկայություններ ստանալն է,

2) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ժամկետների, անցկացման ձևի և ներառվող նյութի ծավալի մասին,

3) պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով,

4) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա ստուգել շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների համապատասխանությունը սույն չափորոշչով 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության «Մենեջեր (կազմակերպիչ)» որակավորմամբ մասնագետի համար սահմանված պահանջներին

ԳԼՈՒԽ 6.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0202 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու համար հաստատությունը կազմում և հաստատում է առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների, ընտրովի դասընթացի ուսումնական ծրագրերը, կրթության կառավարման պետական լիազորված մարմնի երաշխավորած ձևին համապատասխան ուսումնական պլանը՝ հաշվի առնելով 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը:

21. Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

1) կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները,

2) պետք է մոդուլների արդյունքներին և դրանց կատարման չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերը մշակելիս հաշվի առնի գործատուների, գործադիր իշխանությունների,

մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

3) պետք է առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշի տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

4) պետք է միջանկյալ ատեստավորման ընդհանուր շաբաթների սահմաններում որոշի ըստ կիսամյակների այս ատեստավորմանը հատկացվող ժամանակը,

5) պետք է մասնագիտության նկարագրին համապատասխան տվյալ որակավորման ամբողջացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը հաշվի առնելով՝ կազմի և հաստատի ընտրովի դասընթացների ուսումնական ծրագրերը,

6) օգտվելով երաշխավորված ձևում տրված պարզաբանումներից՝ պետք է կազմի ուսումնական պլանի կիրառման պարզաբանումները,

7) պետք է պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշի ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

8) պետք է սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերին համապատասխան ընտրի ամփոփիչ ատեստավորման ձևը:

Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «Հ Ա Ղ ՈՐ Դ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն»	
	ԱՀ-Հ-5-11 001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, բ.ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, գ.ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, դ.շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը, ե.անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:
Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, բ.բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, գ.հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, դ. ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է

	Ե.մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
Ուսումնառության արդյունք 3	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,</p> <p>բ.կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան</p> <p>գ.օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար,</p> <p>դ.կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,</p> <p>ե.վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,</p> <p>զ.բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,</p> <p>է.գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:</p>
Ուսումնառության արդյունք 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
Կատարման չափանիշներ	<p>ա.նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և գրուցակցի կամ հաստեատիրոջ,</p> <p>բ.ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,</p> <p>գ.առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>դ.օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>ե.ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,</p> <p>զ.պահպանում և եզրափակում է երկխոսությունը,</p> <p>է.կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</p>
Ուսումնառության արդյունք 5	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
Կատարման չափանիշներ	<p>ա.ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),</p> <p>բ.հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,</p> <p>գ.հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>դ.օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու</p>

	<p>համար, Ե.հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն, գ.ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԳՀ- 5-11-001
Մոդուլի նպատակը	<p>Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կոլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:</p>
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Փնտրել և գտնել աշխատանք
Կատարման չափանիշներ	<p>ա.ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները , բ.կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղը(երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, գ.ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV), դ.ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը, ե.ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:</p>
Ուսումնառության արդյունք 2	Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ
Կատարման չափանիշներ	ա.ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական

	<p>պահանջները,</p> <p>բ.հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը,</p> <p>գ.ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ,</p> <p>դ.առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ,</p> <p>ե.ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:</p>
Ուսումնառության արդյունք 3	Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը
Կատարման չափանիշներ	<p>ա.ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանիքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը,</p> <p>բ.ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները,</p> <p>գ.դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման,</p> <p>դ.առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում,</p> <p>ե.կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:</p>
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները
Կատարման չափանիշներ	<p>ա.բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p> <p>բ.բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p> <p>գ.բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p> <p>դ.ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը,</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-5-11-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում

	անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, բ. ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, գ.ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դ.ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, ե.ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, զ.ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները,
Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
Կատարման չափանիշներ	ա.ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական), բ.ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն), գ.ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը, դ.ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:
Ուսումնառության արդյունք 3	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
Կատարման չափանիշներ	ա.ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները, բ.ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,

	գ.ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, դ.ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:
Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
Կատարման չափանիշներ	ա.տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, բ.առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում, գ.կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն, դ.կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն, ե.կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ, զ.կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում, է.ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-5-11-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները:
Մոդուլի տևողությունը	54ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում

Կատարման չափանիշներ	<p>ա.տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին,</p> <p>բ.տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին,</p> <p>գ.տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն),</p> <p>դ.ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,</p> <p>ե.ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office),</p> <p>զ.կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը,</p> <p>է.օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,</p> <p>ը.ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ , պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում,</p> <p>թ.կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print):</p>
Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
Կատարման չափանիշներ	<p>ա.կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,</p> <p>բ.մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,</p> <p>գ.կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ,</p> <p>դ.կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից,</p> <p>ե.կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն:</p>
Ուսումնառության արդյունք 3	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
Կատարման չափանիշներ	<p>ա.ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք,</p> <p>բ.կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ,</p> <p>գ.կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուններ և այլն),</p> <p>դ.փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում,</p> <p>ե.ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:</p>
Ուսումնառության արդյունք 4	Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում

Կատարման չափանիշներ	<p>ա.գծագրում է գրաֆիկական օբյեկտներ,</p> <p>բ.գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը,</p> <p>գ.գծագրում է կանոնավոր պատկերներ,</p> <p>դ.ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով,</p> <p>ե.խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,</p> <p>զ.գծագրում է տեքստային բլոկներ,</p> <p>է.կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:</p>
Ուսումնառության արդյունք 5	Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
Կատարման չափանիշներ	<p>ա.ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը,</p> <p>բ.մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ,</p> <p>գ.ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով,</p> <p>դ.կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար</p> <p>ե.ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:</p>
Ուսումնառության արդյունք 6	Համացանցում աշխատելու իմացություն
Կատարման չափանիշներ	<p>ա.ներկայացնում է « համացանց » հասկացությունը,</p> <p>բ.օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը,</p> <p>գ.ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը,</p> <p>դ.փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),</p> <p>ե.կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,</p> <p>զ.գրանցվում է էլեկտրոնային փոստում , ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում,</p> <p>է. օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում տեղեկատվություն (հաղորդագրություն, նամակ և կցորդ):</p>

Միջին մասնագիտական կրթության 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՍԱԿ 5-11-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին հաղորդել գիտելիքեր պետության և իրավունքի ծագման, գործառման, զարգացման հիմնական և ընդհանուր օրինաչափությունների վերաբերյալ, սովորեցնել իրավաբանական լեզուն և հիմնարար հասկացությունները, ինչպես նաև ձևավորել ընդհանուր մասնագիտական արհեստավարժություն, իրավական աշխարհայացք և իրավական մշակույթ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ պետության և իրավունքի զարգացման հիմնական օրինաչափությունները և կատեգորիաները
Կատարման չափանիշներ	<p>ա. կարողանում է բնորոշել «պետություն» հասկացությունը, ներկայացնել դրա հատկանիշները, դերը և արտաքին ու ներքին գործառույթները, նկարագրում է պետության կառուցվածքը և հիմնավորում է իշխանությունների բաժանման սկզբունքի անհրաժեշտությունը,</p> <p>բ. տարբերում է պետության ձևի բաղադարատարրերը, հատկապես, պետական կառավարման հանրապետական և միապետական ձևերը,</p> <p>գ. ճիշտ է բնորոշում «իրավունք» հասկացությունը, վերլուծում է իրավունքի հատկանիշները, թվարկում իրավունքի սկզբունքները, բացատրում դրանց բովանդակությունը և տեսագործական նշանակությունը,</p> <p>դ. բացատրում է իրավունքի նորմը, որոնք են դրա կառուցվածքային մասերը և ինչ դեր են խաղում դրանցից յուրաքանչյուրը իրավական կարգավորման համակարգում.</p>
Ուսումնառության արդյունք 2	Տարբերել իրավունքի ձևերը և իրավունքի համակարգի տարրերը

<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. տարբերում է իրավունքի տեսակները, հասկանում է դրանց աստիճանակարգությունը և գործնական նշանակությունը ՀՀ իրավական համակարգում, բ. տարբերում է իրավունքի համակարգի կառուցվածքային մասերը, հատկապես իրավունքի ճյուղերը և դրանց բաժանման չափանիշները, գ. թվարկում է ՀՀ իրավունքի համակարգի հիմնական ճյուղերը և նկարագրում է դրանցից ամեն մեկի կարգավորման առարկան.</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Պատկերացնել իրավական կարգավորման կառուցակարգը, վերջինիս բաղադրատարրերը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. պատկերացնում է հասարակական կյանքում իրավական կարգավորման և իրավական ազդեցության տարբերությունը, բ. նկարագրում է իրավական կարգավորման կառուցակարգը (մեխանիզմը)՝ թվարկելով դրա հիմնական տարրերը, գ. կարող է կազմել իրավական կարգավորման կառուցակարգի սխեման և բացատրել այն, դ. վեր է հանում իրավական կարգավորման կառուցակարգում այն դերը և նշանակությունը, որ կատարում են իրավագիտակցությունը և իրավական մշակույթը.</p>
<p>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ: ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ»</p>	
<p>Մոդուլի դասիչը</p>	<p>ՍԱԿ 5-11-002</p>
<p>Մոդուլի նպատակը</p>	<p>Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ հոգեբանության առարկայի, խնդիրների ուսումնասիրման մեթոդների մասին:</p>
<p>Մոդուլի տևողությունը</p>	<p>60 ժամ</p>
<p>Մուտքային պահանջներ</p>	<p>Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:</p>
<p>Մոդուլի գնահատման կարգը</p>	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p>
<p>Ուսումնառության արդյունք 1</p>	<p>Տիրապետել հոգեբանություն գիտության առարկային, մեթոդներին և խնդիրներին</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է սահմանում հոգեբանություն գիտությունը, բ. ճիշտ է ներկայացնում հոգեբանության առարկան, գ. ճիշտ է ներկայացնում հոգեբանության ուսումնասիրության հիմնական մեթոդները, դ. ճիշտ է ներկայացնում հոգեբանության կողմից լուծվող հիմնական խնդիրները,</p>

	Ե. ճիշտ է ներկայացնում հոգեբանության դերը սոցիալական սպասարկման գործում.
Ուսումնառության արդյունք 2	Տիրապետել անձի և գործունեության կառուցվածքի մասին գիտելիքներին
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում անձի կառուցվածքը, բ. ճիշտ է ներկայացնում գործունեության կառուցվածքը.
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ: ԻՄԱՑԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՋԱԿԱՄԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՍԱԿ 5-11-003
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ հոգեբանական գործընթացների, դրանց բնույթի, մեխանիզմների և դրսևորման օրինաչափությունների մասին:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջներ	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմացական գործընթացների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների դրսևորում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում իմացական գործընթացները՝ զգայություն, ընկալում, ուշադրություն, բ. ճիշտ է ներկայացնում իմացական գործընթացները՝ հիշողություն, մտածողություն, երևակայություն.
Ուսումնառության արդյունք 2	Հուզականային գործընթացների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների դրսևորում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում մարդու հույզերն ու զգացմունքները, բ.ճիշտ է դասակարգում մարդկանց՝ ըստ խառնվածքների, ներկայացնում է յուրաքանչյուր տիպի առանձնահատկությունները.
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՓԱՍՏԱԹՂԹԱՇԻՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՍԱԿ 5-11-004
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ գործավարությունը կարգավորող իրավական ակտերի, ստանդարտների, օգտագործվող փաստաթղթերի մշակման և պահպանման, փաստաթղթային նորմերի ապահովման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի վերաբերյալ, ինչպես նաև նրա մոտ ձևավորել

	գործավարության մեջ օգտագործվող փաստաթղթերի հիմնական տեսակները պատրաստելու և ձևավորելու (ելից, մտից և ներքին փաստաթղթերի ընդունում, գրանցում, փաստաթղթերի որոշարկում, սահմանված ժամկետում կատարողին հանձնում, կատարման հսկողության կազմակերպում, պատասխան փաստաթղթի նախագծի մշակում), կազմակերպության գործավարության անհատական հրահանգը մշակելու, գործավարությամբ ավարտված փաստաթուղթը արխիվ հանձնելու կարողություն:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջներ	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ ««Իրավական ակտերի մասին»» ՀՀ օրենքը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ««իրավական ակտ»» հասկացությունը, իրավական ակտերին ներկայացվող պահանջները, բ. ճիշտ է ներկայացնում իրավական ակտերի համակարգը, գ. ճիշտ է ներկայացնում իրավական ակտերի մշակման, քննարկման և ընդունման կարգերը, դ. ճիշտ է ներկայացնում իրավական ակտերի տեսակները և ստորադասությունը, ե. ճիշտ է ներկայացնում նորմատիվ, անհատական և ներքին իրավական ակտերի համեմատական սխեման, զ. ճիշտ է ներկայացնում իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման ընթացակարգը, է. ճիշտ է ներկայացնում օրենսդրական տեխնիկայի կանոնները, ը. ճիշտ է ներկայացնում իրավական ակտերի հրապարակման, հաշվառման, ուժի մեջ մտնելու, գործողության, փոփոխման, գործողության դադարեցման, մեկնաբանման, պարզաբանման ու համակարգման ընդհանուր կարգը»
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ ««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»» ՀՀ օրենքը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում վարչական մարմինները ՀՀ-ում, բ. ճիշտ է ներկայացնում ««վարչարարություն»» հասկացությունը, գ. ճիշտ է ներկայացնում վարչարարության սկզբունքների ամրագրման նպատակը, վարչարարության հիմնարար սկզբունքները, ինչպես նաև այդ սկզբունքների տարբերությունը, դ. ճիշտ է ներկայացնում վարչական վարույթի հարուցման, վարույթի ընթացքի և ավարտական փուլերը,

	<p>ե. ճիշտ է ներկայացնում վարչական ակտի տեսակները, ձևերը, դրանց ընդունման, իրազեկման և ուժի մեջ մտնելու կարգը,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական մարմինների՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց հասցեագրված անհատական իրավական ակտերի (վարչական ակտերի) ընդունման, ուժի մեջ մտնելու, այդ ակտերի բողոքարկման, դրանց հարկադիր կատարման, վարչական վարույթի ընթացքում առաջացող ծախսերը,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում վարչական բողոք բերելու հիմքերը և բողոքարկման կարգը.</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Իմանալ գործավարությունը կարգավորող այլ իրավական ակտերը և մշակել գործավարության կարգը (իրահանող)</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա.ճիշտ է ներկայացնում ՀՀ անվտանգության (քաղաքացիների, հանրության և պետության կենսական կարևոր շահերի) ապահովման նպատակով որոշակի բնագավառի տեղեկություններ պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու, գաղտնազերծելու և պաշտպանելու կապակցությամբ ծագող հարաբերությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում «պետական գաղտնիք» և «ծառայողական գաղտնիք» հասկացությունները, գաղտնիության աստիճանները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ՀՀ լեզվական քաղաքականության հիմնական դրույթները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ՀՀ զինանշանի նկարագրությունը և գործածման կարգը,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում ՀՀ դրոշի նկարագրությունը և գործածման կարգը,</p> <p>զ. ՀՀ արխիվային հավաքածուի և արխիվային այլ փաստաթղթերի (անկախ դրանց նկատմամբ սեփականության իրավունքից) համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման, ինչպես նաև արխիվային գործի հետ առնչվող իրավահարաբերությունները,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում ՀՀ կառավարության գործավարության կարգը և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը,</p> <p>ը.ճիշտ է ներկայացնում պետական կառավարման մարմնի աշխատակազմի ներքին գործավարության կազմակերպման ու իրականացման ընթացակարգը,</p> <p>թ.ճիշտ է ներկայացնում ծառայողական փաստաթղթերի յուրահատկությունները և սոցիալական պաշտպանության ոլորտում կիրառվող փաստաթղթերի տեսակները,</p>

	<p>ժ. ճիշտ է ներկայացնում պաշտոնական գրությունների պատրաստման հիմունքները,</p> <p>ժա. թվարկում և ներկայացնում է փաստաթղթավորման աշխատանքները կարգավորող նորմատիվ իրավական ակտերը,</p> <p>ժբ. գործավարությունը կարգավորող իրավական ակտերի հիման վրա ճիշտ է մշակում կազմակերպության գործավարության կարգը (հրահանգը).</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Իմանալ փաստաթղթերի միասնական ձևավորմանը ներկայացվող պահանջները</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է ներկայացնում ««փաստաթուղթ»» հասկացությունը, էությունը, փաստաթղթերի նշանակությունը կառավարման համակարգում, փաստաթղթերի իրավական արժեքը,</p> <p>բ. թվարկում է փաստաթղթի իրավաբանական ուժն ապահովող վավերապայմանները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի ձևաթղթերի տեսակները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի ռեկվիզիտները, դրանց ձևավորման կարգը,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում օգտագործվող բոլոր փաստաթղթերի դասակարգումը,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում գործավարության հիմքում դրված սկզբունքները,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում գործերի վերնագրերի կազման, գործերի ձևակերպման, վարման, գործերի անվանակարգի տեսակները, ձևավորման և հաստատման կարգը,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի շրջանառության միասնական շարժը,</p> <p>թ. ճիշտ է ներկայացնում գործավարության գործունեության բնագավառի և փաստաթղթերի ձևավորման կարևոր տարրերը՝ գործավարության գործունեության բնագավառի, փաստաթղթերի ապահովման նորմերի, փաստաթղթերի կատարողի վերաբերյալ նշման կարգի, փաստաթղթի վավերականացման վերաբերյալ նշման կարգի, փաստաթղթերի հաստատման եղանակների, փաստաթղթերի տեքստերի վերնագրման և ձևավորման, փաստաթղթերի համաձայնեցման նշագրումների վերաբերյալ դրույթները,</p> <p>ժ. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգը (mulberry), դրա նկարագրությունը, անհրաժեշտ գործողությունների ցանկերն ու հնարավոր բոլոր իրադրությունները,</p> <p>ժա. ճիշտ է ներկայացնում էլեկտրոնային թղթակցության առավելությունները և թերությունները.</p>

<p>Ուսումնառության արդյունք 5</p>	<p>Կատարել փաստաթղթերի որոշարկման, սահմանված ժամկետում կատարողին հանձնելու, կատարման հսկողության (փաստաթղթաշրջանառության) կազմակերպման, ստանդարտ պատասխան պահանջող փաստաթղթի նախագծի մշակման գործընթացները</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է իրականացնում ներկայացված փաստաթղթերի որոշարկման և կատարողներին հանձնման աշխատանքները, բ. ճիշտ է ներկայացնում մտից, ելից փաստաթղթերի, ներքին փաստաթղթերի, քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քանակի հաշվառման գրանցման սկզբունքները, գ. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի ինդեքսավորման, գրանցման ձևերն ու դրանց լրացման կարգը, դ. համառոտ ճիշտ է ներկայացնում հիմնական նյութի բովանդակությունը, ե. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի կատարման հսկողության նշանակությունը ու տեսակները, զ. ճիշտ է պատրաստում ստանդարտ պատասխան պահանջող փաստաթղթի նախագիծը, է. ճիշտ է պատասխանում մասնագիտական նյութի վերաբերյալ հարցերին՝ պահպանելով պաշտոնական, վարչարարական ոճերին բնորոշ բառային և շարահյուսական ձևերը, ը. ճիշտ է ներկայացնում բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը, թ. կարողանում է պատրաստել աշխատանքային և պաշտոնական գրագրության տեքստեր (իրաման, պաշտոնական գրություն, երաշխավորություն, կարծիք և այլն.), ժ. կարողանում է պատրաստել քաղաքացիական գործառույթներ իրականացնող տեքստեր (լիազորագիր, ակտ, պայմանագիր, նվիրատվություն և այլն.).</p>
<p>Ուսումնառության արդյունք 6</p>	<p>Իմանալ կազմակերպական, կարգադրական, հաղորդատեղեկատվական բնույթի, անձնակազմի վերաբերյալ փաստաթղթերի տեսակները և դրանց ձևակերպման առանձնահատկությունները</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա.ճիշտ է ներկայացնում կազմակերպական բնույթի փաստաթղթերի (կանոնադրություններ, կարգեր, աշխատակարգեր) առանձնահատկությունները և ձևակերպման սկզբունքները, բ. ճիշտ է ներկայացնում կարգադրական բնույթի փաստաթղթերի (իրամաններ, կարգադրություններ, որոշումներ) առանձնահատկությունները և ձևակերպման սկզբունքները, գ. ճիշտ է ներկայացնում հաղորդատեղեկատվական բնույթի փաստաթղթերի (գրություններ, զեկուցագրեր, տեղեկանքներ, արձանագրություններ և այլն.) առանձնահատկությունները և ձևակերպման սկզբունքները,</p>

	<p>դ. ճիշտ է ներկայացնում անձնակազմի վերաբերյալ փաստաթղթերի (հրամաններ անձնակազմի վերաբերյալ, աշխատանքային պայմանագրեր, աշխատանքային գրքույկներ, անձնական թերթիկներ, դիմում, տեղեկանք, ինքնակենսագրություն, բնութագիր, բացատրագիր, քաղվածք և այլն.) առանձնահատկությունները և ձևակերպման սկզբունքները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում աշխատողի արձակուրդը ձևակերպելու, աշխատողին խրախուսանքի կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու, ժամանակավորապես այլ աշխատանքի փոխադրելու, այլ վայր գործուղելու, ինչպես նաև անհատական աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ հարցեր կարգավորելու նպատակով իրավական ակտերի մշակման և հաշվառման ընթացակարգը,</p> <p>զ. կարողանում է մշակել կազմակերպական և կարգադրական բնույթի փաստաթղթեր (կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրություն, կազմակերպության գործունեությունը կանոնակարգող կարգեր և աշխատակարգեր, պաշտոնի անձնագիր, իրավական ակտերի նախագծեր և այլն.),</p> <p>է. կարողանում է գրել ինքնակենսագրություն, բնութագիր, տեղեկանք, դիմում, արձանագրություն, ինչպես նաև պատրաստել քաղվածքի նախագիծ.</p>
<p>Ուսումնառության արդյունք 7</p>	<p>Իմանալ կազմակերպության գործունեությամբ առաջացող փաստաթղթերի արխիվացման, պահպանման կարգը և այդ կարգի համաձայն իրականացնել փաստաթղթերի արխիվ ներկայացնելու նախապատրաստական աշխատանքները</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է բացատրում արխիվային փաստաթղթի նշանակությունը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում արխիվ հանձնելու համար փաստաթղթերի նախապատրաստման կարգը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի արժեքավորման չափանիշները և փորձագիտական արժեքավորման ընթացակարգը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի փորձաքննության իրականացման և այդ նպատակով փորձագիտական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպման կարգը,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի արխիվային փաստաթղթերի պահպանությունը և հաշվառումը, մատչելիությունն ու օգտագործումը,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում քաղաքացիների դիմումների և կազմակերպությունների հարցումների հիման վրա տրվող</p>

	<p>արխիվային տեղեկանքը, պատճենը, քաղվածքը,</p> <p>է. պահպանման ժամկետների նշումով նորմատիվ ցանկերի համաձայն ճիշտ է որոշում գործերի պահպանման ժամկետները,</p> <p>ը. կարողանում է ձևավորել գործերը, կազմել ցուցակները և դրանք հանձնել արխիվ՝ համաձայն գործող կարգի,</p> <p>թ. ճիշտ է ներկայացնում արխիվացման արդյունքում առաջացած ամփոփիչ փաստաթղթերի (մշտական պահպանման ենթակա, ազգային արխիվ հանձնման ենթակա, ինչպես նաև անձնակազմի վերաբերյալ գործերի ցուցակները և ոչնչացման ենթակա փաստաթղթերը) վերաբերյալ ակտը.</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՍԱԿ 4-11-005
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ անհրաժեշտ գիտելիքներ էթիկայի կանոնների, ծառայությունների կազմակերպման ոլորտում գործարար հարաբերությունների էթիկայի հիմնական սկզբունքների, գործնական վարվեցողության կանոնների, մասնագիտական էթիկայի և գործնական վարվելակերպի, արտաքին տեսքին ներկայացվող պահանջների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել գործընկերների և հաճախորդների հետ հաղորդակցվելիս բարեկիրթ վարվելակերպ դրսևորելու, աշխատավայրում հոգեբանական առողջ մթնոլորտ ստեղծելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջներ	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ ծառայությունների կազմակերպման ոլորտում միջազգային հանրության կողմից ճանաչված և ընդունված մասնագիտական արժեքներն ու սկզբունքները
Կատարման չափանիշներ	<p>ա. հիմնավորում է իր մասնագիտության արժեքային ասպեկտը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում միջազգային կառույցների կողմից ընդունված էթիկական կոդեքսը,</p> <p>գ. կարողանում է ներկայացնել մարդկանց հետ ճիշտ, արդար և անկողմնակալ վարվելու սկզբունքները.</p>

Ուսումնառության արդյունք 2	Իմանալ մասնագիտական էթիկայի և գործնական վարվելակերպի հիմունքներն ու սկզբունքները, ինչպես նաև կարողանալ սեփական գործելակերպով նպաստել ոլորտի իմիջի բարձրացմանը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում մասնագիտական էթիկայի և գործնական վարվելակերպի հիմունքներն ու սկզբունքները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և հաճախորդի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները,</p> <p>գ. ճիշտ է ընկալում (և ապա ներկայացնում) հաճախորդի առաջարկները և ստեղծված պրոբլեմները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում օբյեկտիվ վերաբերմունքով հաճախորդի վստահությունը ձեռք բերելու ձևերը,</p> <p>ե. կարողանում է վարել գործնական զրույցները՝ հաճախորդի հետ պահպանելով տակտը և հարգալից վերաբերմունքը,</p> <p>զ. հաճախորդի հետ շփումների ընթացքում կարողանում է ցուցաբերել վարքագծի կարգավորման պարզագույն ձևեր,</p> <p>է. շփումների ընթացքում կարողանում է դրսևորել խոսքի կուլտուրա, ընտրել ճիշտ տոն և ձայնի հնչերանգներ.</p>
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ մասնագիտական գործունեության ժամանակ հանդիպող էթիկական երկընտրանքների տեսակները և կարողանալ դրանք հաղթահարել
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում իր աշխատանքում հանդիպող էթիկական երկընտրանքները,</p> <p>բ. կարողանում է ելք գտնել էթիկական երկընտրանքային վիճակներից,</p> <p>գ. կարողանում է պահպանել սահմանը անձնական և մասնագիտական արժեքների միջև.</p>
Ուսումնառության արդյունք 4	Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները, թիմային խնդիրների լուծման մեթոդները,</p> <p>գ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն,</p> <p>համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և գործընկերներին:</p> <p>դ. ճիշտ վերաբերմունք է դրսևորում կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ.</p> <p>ե. կարողանում է առաջարկել ճիշտ լուծումներ առաջացած պրոբլեմային իրավիճակների համար.</p>
Ուսումնառության արդյունք 5	Իմանալ աշխատանքի վայրում հագուստին ներկայացվող պահանջները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում տղամարդկանց և կանանց համար հագուստի գործնական ոճին ներկայացվող պահանջները,</p>

	<p>բ. ճիշտ է ներկայացնում իր արտաքին տեսքին ներկայացնող պահանջները,</p> <p>գ. ճիշտ է նկարագրում իր արտաքին տեսքին հետևելու կարգը և ձևերը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում արտաքին գործնական ոճի անհամապատասխանության դրույթները.</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՍԱԿ 5-11-006
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ սոցիալական պաշտպանության ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ, աշատանքի ընթացքում ծագած խնդիրների ճիշտ ընկալմանը և օրենքի շրջանակներում համապատասխան լուծումների առաջարկման համար:
Մոդուլի տևողությունը	84 ժամ
Մուտքային պահանջներ	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ սոցիալական աջակցության ոլորտի իրավական կարգավորման հիմունքները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները (կյանքի դժվարին իրավիճակ, սոցիալական աջակցություն, հաճախորդ, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություն և այլն),</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում սոցիալական աջակցության նպատակը, սոցիալական աջակցության կազմակերպման և տրամադրման սկզբունքները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում սոցիալական ծառայությունների հիմնական տեսակները և կատարում դրանց մեկնաբանումները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում սոցիալական աջակցության բնագավառում ՀՀ կառավարության, լիազոր մարմնի, տարածքային կառավարման պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների լիազորությունները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում սոցիալական աջակցության խորհուրդների ձևավորման և գործունեության սկզբունքները, ինչպես նաև իրավասությունները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում սոցիալական աջակցության ոլորտում աջակցության կարիք ունեցողների (հաճախորդների)</p>

	<p>իրավունքներն ու պարտականությունները,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում սոցիալական ծառայություններ մատուցող աշխատողների (սոցիալական աշխատողի և սոցիալական սպասարկողի) իրավունքները և պարտականությունները,</p> <p>ը. կարողանում է թվարկել «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական նպաստների տեսակները,</p> <p>թ. ճիշտ է ներկայացնում ընտանեկան նպաստ ստանալու համար դիմելու կարգը և ընտանեկան նպաստի վճարման դադարեցման հիմքերը,</p> <p>ժ. ճիշտ է ներկայացնում միանվագ դրամական օգնության տեսակները, տրամադրման և դադարեցման հիմքերը և կարգը.</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Իմանալ կենսաթոշակային ապահովության ոլորտի իրավական կարգավորման հիմունքները</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է ներկայացնում ՀՀ կենսաթոշակային համակարգը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունները, կենսաթոշակ վճարելու միջոցները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում կենսաթոշակների տեսակները, դրանց նշանակման, դադարեցման, վերականգնման կարգը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում կենսաթոշակի հաշվարկման և վերահաշվարկման կարգերը,</p> <p>ե. կարողանում է հաշվարկել աշխատանքային կենսաթոշակի չափը,</p> <p>զ. գիտի աշխատանքային ստաժում հաշվառվող ժամանակահատվածները,</p> <p>է. կարողանում է թվարկել քաղաքացու անհատական տվյալները, որնք ներառվում են պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում կենսաթոշակային համակարգում լիազոր մարմնի իրավասությունները, կազմակերպությունների և քաղաքացիների իրավունքները և պարտականությունները, կենսաթոշակառուի պարտականությունները,</p> <p>թ. ճիշտ է ներկայացնում կենսաթոշակին վերաբերող վեճերը լուծելու կարգը.</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Իմանալ բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության իրավական կարգավորման հիմունքները</p>
	<p>ա. ճիշտ է ներկայացնում զբաղվածություն հանդիսացող գործունեության տեսակները, զբաղված և չզբաղված,</p>

<p>Կատարման չափանիշներ</p>	<p>աշխատանք փնտրող և գործազուրկ անձանց սահմանումներն ու տալիս համապատասխան պարզաբանումներ, բ. ճիշտ է ներկայացնում աշխատանք փնտրող անձանց հաշվառումը, գործազուրկի կարգավիճակի կասեցումը, վերականգնումը, դադարեցումը, հաշվառումից հանումը և տալիս համապատասխան պարզաբանումներ, գ. ճիշտ է ներկայացնում «հարմար աշխատանք» հասկացության սահմանումը, դ. ճիշտ է ներկայացնում բնակչության զբաղվածության պետական կարգավորման սկզբունքները, ամենամյա պետական ծրագրերի կառուցվածքը, կազմման և համաձայնեցման ընթացակարգերը, ե. կարողանում է թվարկել զբաղվածության պետական ծառայության հիմնական լիազորությունները, զ. ճիշտ է ներկայացնում համաձայնեցման կոմիտեների և գործատուների մասնակցությունը զբաղվածության պետական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում.</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Իմանալ երեխաների, կանանց և ընտանիքի սոցիալական պաշտպանության իրավական կարգավորման հիմունքները</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է ներկայացնում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության սկզբունքները, բ. ճիշտ է ներկայացնում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության երաշխիքները, գ. ճիշտ է ներկայացնում կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների երաշխիքները, դ. ճիշտ է ներկայացնում ամուսնության կնքման և դադարեցման, ամուսինների իրավունքների և պարտականությունների սկզբունքները, ե. ճիշտ է ներկայացնում ծնողների և զավակների իրավունքները և պարտականությունները, զ. ճիշտ է ներկայացնում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դաստիարակության սկզբունքները.</p>

Ուսումնառության արդյունք 5	Իմանալ տարեցների և հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական կարգավորման հիմունքները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում տարեցների և հաշմանդամների կրթության, մասնագիտական վերապատրաստման և վերաորակավորման իրավունքները և դրանք իրականացնելու սկզբունքները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում տարեցների և հաշմանդամների աշխատանքային իրավունքների երաշխիքները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում տարեցներին և հաշմանդամներին ցույց տրվող սոցիալական օգնության սկզբունքները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում տարեցների և հաշմանդամների համար սոցիալական ենթակառուցվածքների մատչելիությունը.</p>
Ուսումնառության արդյունք 6	Իմանալ կրթության ոլորտի իրավական կարգավորման հիմունքները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում կրթության բնագավառում օրենսդրության հիմնախնդիրները և մեկնաբանում բնագավառի հիմնական հասկացությունները և պետական քաղաքականությունը,</p> <p>բ. ճիշտ է մեկնաբանում կրթական համակարգի կառուցվածքը, ուսումնական հաստատությունների տիպերը, կրթության ձևերը և յուրաքանչյուր դեպքում շնորհվող որակավորումները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում հանրակրթական ծրագրերի տեսակները և դրանցից յուրաքանչյուրի (նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական) առանձնահատկությունները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության առանձնահատկությունները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում սոցիալական օգնության կարիք ունեցող անձանց և ընտանիքներին կրթության բնագավառում արտոնյալ ծառայությունների մատուցման պայմանները.</p>
Ուսումնառության արդյունք 7	Իմանալ առողջապահության ոլորտի իրավական կարգավորման հիմունքները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում հաշմանդամության կանխարգելման և բժշկական վերականգնման սկզբունքները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում հաշմանդամության ճանաչման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և հաշմանդամության ճանաչման գործընթացը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում հաշմանդամի հետ անհատական վերականգնողական ծրագրով աշխատանքների կազմակերպումը տարբեր՝ պետական և ոչ պետական կազմակերպությունների կողմից,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում հաշմանդամների և տարեցների համար արտոնյալ պայմաններով սահմանված ծառայությունները և այդ ծառայությունները մատուցող կազմակերպությունների գործառույթները:</p>

	ե. ճիշտ է ներկայացնում բնակչության համար պետության կողմից առողջապահության ոլորտում մատուցվող ծառայությունների համար սահմանված արտոնությունները.
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻՈԼՈԳԻԱ»	
Մոդուլի դասիչը	ՍԱԿ 5-11-007
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողներին տալ գիտելիքներ «հասարակություն» համակարգի և նրա ենթահամակարգերի գործառնման հիմնական օրենքների և օրինաչափությունների մասին:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջներ	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ սոցիոլոգիայի ձևավորման օրինաչափությունների, նրա ուսումնասիրության օբյեկտի և առարկայի առանձնահատկությունների մասին
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում սոցիոլոգիայի, որպես գիտակարգի, ձևավորման, տեսական, տնտեսական և քաղաքական նախադրյալները, բ. ճիշտ է ներկայացնում սոցիոլոգիայի կայացման ընթացքում դասական համարվող գիտնականների հիմնական հայացքները, գ. ճիշտ է ներկայացնում սոցիոլոգիայի և մնացած հասարակական գիտությունների կապը.
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ մշակույթի ձևավորման և զարգացման օրինաչափությունների, սոցիալականացման երևույթի և նրա առանձնահատկությունների մասին
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում մշակույթը և ենթամշակույթը, հասարակության վերարտադրության գործում դրանց ունեցած դերը, բ. ճիշտ է սահմանում սոցիալականացման և շեղվող վարքի երևույթները, սոցիալական վերահսկողության ինստիտուտը և նրա գործառույթները, գ. ճիշտ է ներկայացնում անձի լինելիության գործընթացը և այդ գործընթացում հիմնական դերակատարներին.
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ հասարակության ինստիտուցիոնալ կառուցվածքը և նրա հիմնական ինստիտուտներն իրենց գործառույթներով

Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է սահմանում սոցիալական ինստիտուտը,</p> <p>բ. ճիշտ է սահմանում ընտանիքը որպես ինստիտուտ և նրա հիմնական գործառույթները,</p> <p>գ. ճիշտ է սահմանում կրթությունը որպես ինստիտուտ և նրա գործառույթները,</p> <p>դ. ճիշտ է սահմանում առողջապահությունը որպես ինստիտուտ և նրա գործառույթները,</p> <p>ե. ճիշտ է սահմանում սոցիալական պաշտպանությունը որպես ինստիտուտ և նրա գործառույթները.</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՍԱԿ 5-11-008
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ սոցիալական հետազոտության մեթոդների վերաբերյալ, նրա մոտ ձևավորել հետազոտությունների տարբեր մեթոդների կիրառման հմտություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջներ	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ մասնագիտական գործունեության ընթացքում հետազոտական գործընթացի կիրառման անհրաժեշտությունը
Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է հիմնավորում սոցիալական ապահովության ընթացքում հետազոտության անհրաժեշտությունը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում հետազոտական նախագծի մեթոդաբանական և մեթոդական պահանջները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում հետազոտական տարբեր նախագծերի առանձնահատկությունները.</p>
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ սոցիալական աշխատանքում /սոցիալական ապահովության կազմակերպման/ տեղեկատվության ստացման հիմնական մեթոդները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի ուսումնասիրության մեթոդը և նրա տեսակները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում հարցման մեթոդը, նրա տեսակները,</p> <p>գ.ճիշտ է ներկայացնում դիտարկման մեթոդը և նրա տեսակները,</p> <p>դ. Ճիշտ է ներկայացնում է գիտափորձն իր տեսակներով.</p>

Ուսումնառության արդյունք 3	Կարողանալ կիրառել սոցիալական աշխատանքում տեղեկատվության ստացման տարբեր մեթոդներ
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է փաստաթղթերից ստանալ վիճակագրական տեղեկատվություն, բ. Կարողանում տրված հարցաթերթով կատարել հարցում, գ. Կարողանում է տրված պլանով անցկացնել հարցազրույց և գրանցել արդյունքները, դ. Կարողանում է տրված թեսթով կատարել սոցիոմետրիկական հարցում, ե. Կարողանում է տրված պլանով կատարել փորձագիտական հարցում.
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՍԱԿ 5-11-009
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել համալիր պատկերացում սոցիալական աշխատանքի՝ որպես գործունեության, տեսակի, տեսական հիմքերի, մեթոդների և ուղղությունների վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	102 ժամ
Մուտքային պահանջներ	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ սոցիալական աշխատանքի դերը հասարակության մեջ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում և հիմնավորում է սոցիալական աշխատանքի տարբեր սահմանումները, բ. ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքը և որպես օգնող մասնագիտություն, և որպես գիտություն, գ. ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքի տեսական հիմքերը և մասնագիտության կապն այլ օգնող մասնագիտությունների հետ.
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ սոցիալական աշխատանքի, որպես մասնագիտական գործունեության, կայացման ընթացքը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում կամավորության և բարեգործության դերը սոցիալական աշխատանքի զարգացման գործում, բ. ճիշտ է ներկայացնում եկեղեցու դերը մասնագիտության զարգացման գործում, գ. ճիշտ է ներկայացնում ոլորտի հայտնի գործիչների դերը մասնագիտության ձևավորման ու զարգացման գործում.
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ սոցիալական աշխատանքի հիմնարար արժեքներն ու սկզբունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքում ընդունված հիմնական արժեքներն ու սկզբունքները,

	բ. ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքում հանդիպող էթիկական երկընտրանքներն ու դրանց հաղթահարման ուղիները.
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ սոցիալական աշխատանքի մեթոդների մասին
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում անհատական սոցիալական աշխատանքի սկզբունքները, բ. ճիշտ է ներկայացնում խմբային սոցիալական աշխատանքի սկզբունքները, գ. ճիշտ է ներկայացնում համայնքային սոցիալական աշխատանքի սկզբունքները.
Ուսումնառության արդյունք 5	Իմանալ բնակչության սոցիալապես խոցելի խմբերը, նրանց կարիքները և պաշտպանության տեխնոլոգիաները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում երեխաների հետ սոցիալական աշխատանքի բովանդակությունն ու ձևերը, բ. ճիշտ է ներկայացնում տարեցների հետ սոցիալական աշխատանքի բովանդակությունն ու ձևերը, գ. ճիշտ է ներկայացնում հաշմանդամների հետ սոցիալական աշխատանքի բովանդակությունն ու ձևերը, դ. ճիշտ է ներկայացնում է իրավախախտների հետ սոցիալական աշխատանքի բովանդակությունն ու ձևերը.
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԵՊՔԻ ՎԱՐՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՍԱԿ 5-11-010
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ տեսական և գործնական գիտելիքներ սոցիալական դեպքի վարման մասին:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջներ	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ սոցիալական դեպքի վարման ընթացքը և փուլերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում սոցիալական դեպքը, բ. ճիշտ է բաժանում սոցիալական դեպքի վարման գործընթացը ինքնուրույն փուլերի, գ. ճիշտ է բնութագրում դեպքի վարման յուրաքանչյուր փուլը.
Ուսումնառության արդյունք 2	Կարողանալ վարել սոցիալական դեպքը օրինակի վրա
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում այցելուի (հաճախորդի) հիմնախնդիրը, բ. ճիշտ է կազմում դեպքին միջամտության պլանը,

	<p>գ. ճիշտ է ներկայացնում է միջամտության պլանի իրականացման քայլերը,</p> <p>դ. ճիշտ է կատարում միջամտության արդյունքների գնահատում,</p> <p>ե. ճիշտ է կատարում դեպքի գրանցում և նրա հետ կապված գրառումները.</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵՆՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՍԱԿ 5-11-011
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել սոցիալական պաշտպանության տարբեր ենթադրոտներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ գործող համակարգերից օգտվելու կարողություն:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ՀՕՀ 5-11-001 «Համակարգչային օպերատորության հիմունքներ» և ՍԱԿ 5-11-003 «Փաստաթղթաշրջանառություն և գործավարություն» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ սոցիալական պաշտպանության ոլորտի տվյալների բազաների, գործող համակարգերի բովանդակությունը, յուրաքանչյուրի նշանակությունը, կառուցվածքը և օգտագործելու հնարավորությունները
Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության ոլորտի տվյալների բազաների, գործող համակարգերի բովանդակությունը և կառուցվածքը,</p> <p>բ. ճիշտ է նկարագրում է սոցիալական պաշտպանության ոլորտի տվյալների ենթաբազաների (սոցիալական ապահովության քարտերի, հաշմանդամների հաշվառման “Փյունիկ”, զբաղվածության “Գործ”, անապահովության գնահատման “Նպաստ”, երեխաների ծննդյան միանվագ և մինչև երկու տարեկան երեխաների նպաստի “Նպաստ-2”, նախկին ԽՍՀՄ խնայբանկի ավանդառուների հաշվառման “Ավանդ”, “Մանուկ” “Մանկատուն” և “Որդեգրում” ենթահամակարգերի, պետական կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համակարգում ընդգրկված անձանց տվյալների անհատական (անձնավորված) հաշվառման ”Պառնաս” տեղեկատվական համակարգերի) դերը և նշանակությունը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում նշված ենթաբազաներն օգտագործելու հնարավորությունները.</p>
Ուսումնառության արդյունք 2	Սոցիալական պաշտպանության ոլորտում ցանցային համակարգերի, էլեկտրոնային կառավարման և կապի

	միջոցներով աշխատելու կարողություն
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում տեղային և տարածաշրջանային (համացանց) ցանցային համակարգերի օգտագործման նշանակությունն ու տարբերությունը և կիրառում այն,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրոնային կառավարման և կապի միջոցների կիրառման նպատակը և խնդիրները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում էլեկտրոնային կառավարման սխեման և կառուցվածքը՝ ըստ հորիզոնական կապերի և ուղղահայաց ենթակայության,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում էլեկտրոնային կառավարման համակարգի հիմնական ուղղությունները՝ պետություն – պետություն, պետություն - քաղաքացի կամ քաղաքացի – պետություն, պետություն – բիզնես կամ բիզնես – պետություն.</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ»	
Մոդուլի դասիչը	ՍԱԿ 5-11-012
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ սոցիալական ոլորտի պետական և ոչ պետական համակարգերի կառուցվածքի, դրանց ենթակառուցվածքների ձևավորման և գործառնման վերաբերյալ, ինչը հնարավորություն կտա ճիշտ ընկալել և օրենքի շրջանակներում համապատասխան լուծումներ առաջարկել այդ կազմակերպություններում սոցիալական ապահովության կազմակերպման վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջներ	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ պետության կողմից վարվող սոցիալական քաղաքականության սկզբունքները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում կրթության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում առողջապահության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականությունը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ոչ պետական սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների նկատմամբ վարվող պետական քաղաքականության սկզբունքները.</p>

Ուսումնառության արդյունք 2	Իմանալ կրթության, առողջապահության և սոցիալական ոլորտների պետական ենթակառուցվածքները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում կրթության համակարգը, նրա ենթակառուցվածքները և այդ համակարգում սոցիալական ապահովության կազմակերպման առանձնահատկությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում առողջապահության համակարգը, նրա ենթակառուցվածքները և այդ համակարգում սոցիալական ապահովության կազմակերպման առանձնահատկությունները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության համակարգը, նրա ենթակառուցվածքները և այդ համակարգում սոցիալական ապահովության կազմակերպման առանձնահատկությունները.</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՍԱԿ 5-11-013
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ սոցիալական ոլորտի պետական և ոչ պետական համակարգերի կառուցվածքի, դրանց ենթակառուցվածքների ձևավորման և գործառնման վերաբերյալ, ինչը հնարավորություն կտա ճիշտ ընկալել և օրենքի շրջանակներում համապատասխան լուծումներ առաջարկել այդ կազմակերպություններում սոցիալական ապահովության կազմակերպման վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	66 ժամ
Մուտքային պահանջներ	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ՀՕՀ 5-11-001 «Համակարգչային օպերատորության հիմունքներ», ՍԱԿ 5-11-003 «Փաստաթղթաշրջանառություն և գործավարություն» և ՍԱԿ 5-11-011 «ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգը» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կազմակերպությունների կազմակերպաիրավական ձևերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության և կառավարման սկզբունքները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում պետական առևտրային կազմակերպությունների գործունեության և կառավարման սկզբունքները,</p>

	<p>գ. ճիշտ է ներկայացնում հիմնադրամների գործունեության և կառավարման սկզբունքներ,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում Հասարակական կազմակերպությունների գործունեության և կառավարման սկզբունքները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում Բարեգործական կազմակերպությունների գործունեության և կառավարման սկզբունքները.</p>
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ սոցիալական պաշտպանության ոլորտի ենթակառուցվածքների գործառույթները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում սոցիալական աջակցություն տրամադրող կազմակերպությունների կառուցվածքը և հիմնական գործառույթները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում գործազուրկներին սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների կառուցվածքը և հիմնական գործառույթները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում սոցիալական ապահովության ծառայություններ մատուցող կազմակերպությունների կառուցվածքը և հիմնական գործառույթները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում երեխաներին խնամքի ծառայություններ մատուցող կազմակերպությունների կառուցվածքը և հիմնական գործառույթները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում տարեցներին խնամքի ծառայություններ մատուցող կազմակերպությունների կառուցվածքը և հիմնական գործառույթները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում հաշմանդամներին սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների կառուցվածքը և հիմնական գործառույթները,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում ընտանիքներին սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների կառուցվածքը և հիմնական գործառույթները.</p>
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ սոցիալական ոլորտի պետական և ոչ պետական կազմակերպությունների համագործակցության սկզբունքները և այդ ոլորտում պետական քաղաքականությունը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության ոլորտում «պետություն – ոչ պետական կազմակերպություն» համագործակցության սկզբունքները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության ոլորտում «պետական կազմակերպություն – ոչ պետական կազմակերպություն» համագործակցության սկզբունքները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության ոլորտում «պետական կազմակերպություն – քաղաքացի»</p>

	<p>համագործակցության սկզբունքները, դ. ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության ոլորտում «ոչ պետական կազմակերպություն – քաղաքացի» համագործակցության սկզբունքները.</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ»	
Մոդուլի դասիչը	ՍԱԿ 5-11-014
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ապահովագրության՝ որպես ռիսկերի կառավարման կարևորագույն գործիքներից մեկի մասին, սովորողի մոտ ձևավորել համալիր պատկերացում ապահովագրական գործի կազմակերպման կազմակերպչական առանձնահատկությունների, իրավական հիմքերի, ինչպես նաև ապահովագրության տարբեր տեսակների գործնական կիրառման և սոցիալական նշանակության մասին:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մոդուլի պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ապահովագրության, որպես ռիսկի կառավարման գործիքի ներկայացում
Կատարման չափանիշները	<p>ա. ճիշտ ներկայացնում է ռիսկ հասկացության սահմանումները, բ. ճիշտ ներկայացնում է ռիսկի հիմնական դասակարգումները ըստ ապահովագրական և ոչ ապահովագրական հատկանիշի, գ. ճիշտ է ներկայացնում ապահովագրությունը որպես ռիսկի կառավարման գործիք.</p>
Ուսումնառության արդյունք 2	Ապահովագրական հիմնադրամի ձևավորման սկզբունքների և պատմական նախատիպերի ներկայացում
Կատարման չափանիշները	<p>ա. ճիշտ է ներկայացնում ապահովագրական հիմնադրամի ձևավորման հիմնական սկզբունքները, բ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական հիմնադրամների ձևավորման պատմությունը և դրանց դրսևորումները՝ պատմության տարբեր ժամանակահատվածներում.</p>
Ուսումնառության արդյունք 3	Ապահովագրության հիմնական տեսակների առանձնահատկությունները
Կատարման չափանիշները	<p>ա. ճիշտ է ներկայացնում պարտադիր և կամավոր ապահովագրության հիմնական առանձնահատկությունները, բ. ճիշտ է ներկայացնում ապահովագրության հիմնական տեսակները ըստ ապահովագրության օբյեկտի (գույքային</p>

	<p>ապահովագրություն, անձնական ապահովագրություն, պատասխանատվության ապահովագրություն),</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ապահովագրության երկու հիմնական ձևերը (կյանքի և ոչ կյանքի ապահովագրություն),</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում կյանքի և ոչ կյանքի ապահովագրության դասերը և ենթադասերը.</p>
Ուսումնառության արդյունք 4	ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի ապահովագրություն գլխի հիմնական դրույթների իմացություն
Կատարման չափանիշները	<p>ա. ճիշտ է ներկայացնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանվող ապահովագրության հիմնական տարրերը,</p> <p>բ. գիտի ապահովագրության պայմանագրի կողմերի (ապահովագրող, ապահովադիր, շահառու, ապահովագրված անձ) օրենքով սահմանված իրավունքները և պարտավորությունները,</p> <p>գ. գիտի ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանվող ապահովագրության պայմանագրի և վկայագրի պարտադիր վավերապայմանները,</p> <p>դ. գիտի ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանվող ապահովագրական հատուցման վճարման, մասնակի կամ ամբողջությամբ մերժման գործընթացները.</p>
Ուսումնառության արդյունք 5	Գույքի ապահովագրության իմացություն
Կատարման չափանիշները	<p>ա. ճիշտ է ներկայացնում գույքի ապահովագրության տեսակի ներքո ապահովագրվող հիմնական ռիսկերը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում գույքի ապահովագրության պայմանագրերի կնքման (ռիսկի ստանձման) գործընթացը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում գույքի ապահովագրության ոլորտում ապահովագրական հայցերի կարգավորման գործընթացը.</p>
Ուսումնառության արդյունք 6	Անձնական ապահովագրության իմացություն
Կատարման չափանիշները	<p>ա. ճիշտ է ներկայացնում անձնական ապահովագրության տեսակի ներքո ապահովագրվող հիմնական ռիսկերը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում անձնական ապահովագրության պայմանագրերի կնքման (ռիսկի ստանձման) գործընթացը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում անձնական ապահովագրության ոլորտում ապահովագրական հայցերի կարգավորման գործընթացը.</p>
Ուսումնառության արդյունք 7	Պատասխանատվության ապահովագրության իմացություն
Կատարման չափանիշները	<p>ա.ճիշտ է ներկայացնում պատասխանատվության ապահովագրության տեսակի ներքո ապահովագրվող հիմնական ռիսկերը,</p> <p>բ.ճիշտ է ներկայացնում պատասխանատվության ապահովագրության պայմանագրերի կնքման (ռիսկի ստանձման) գործընթացը,</p>

	գ. ճիշտ է ներկայացնում պատասխանատվության ապահովագրության ոլորտում ապահովագրական հայցերի կարգավորման գործընթացը.
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ »	
Մոդուլի դասիչը	ՍԱԿ 5-11-015
Մոդուլի նպատակը	Սովորողին տալ գիտելիքներ կենսաթոշակային համակարգի մասին, նրա մոտ ձևավորել համալիր պատկերացում կենսաթոշակային համակարգի հիմնական մոդելների, դրանց գործառույթների, սոցիալական նշանակության, հիմնական առավելությունների և թերությունների վերաբերյալ: Սովորողին տալ գիտելիքներ ՀՀ կենսաթոշակային համակարգի մասին:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մոդուլի պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կենսաթոշակային համակարգի հիմնական մոդելները, դրանց հիմնական առավելությունները և թերությունները
Կատարման չափանիշները	ա. ճիշտ է ներկայացնում կենսաթոշակային համակարգի բաշխողական և կուտակային մոդելները, բ. ճիշտ է ներկայացնում կենսաթոշակային համակարգի բաշխողական և կուտակային մոդելների առավելությունները և թերությունները.
Ուսումնառության արդյունք 2	Կենսաթոշակային համակարգի միջազգային փորձը
Կատարման չափանիշները	ա. ճիշտ է ներկայացնում կայացած կենսաթոշակային համակարգ ունեցող երկրների փորձը, բ. ճիշտ է իրականացնում ՀՀ կենսաթոշակային համակարգի և միջազգային փորձի համեմատություն.
Ուսումնառության արդյունք 3	ՀՀ կենսաթոշակային համակարգը և օրենսդրությունը
Կատարման չափանիշները	ա. ճիշտ է ներկայացնում «Կուտակային կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքը, բ. ճիշտ է ներկայացնում կենսաթոշակային համակարգի օրենսդրական կարգավորման այլ իրավակական ակտերը, գ. տիրապետում է ՀՀ տարածքում գործող հիմնական կենսաթոշակների (պետական կենսաթոշակ, կամավոր և պարտադիր կուտակային բաղադրիչներ, մասնավոր սխեմաներ) ձևավորման և վճարման մեխանիզմներին (անուիտետ, ծրագրային վճարներ, միանվագ վճարներ և այլն),

	դ. ճիշտ է ներկայացնում կենսաթոշակային ֆոնդերի կառավարման մեխանիզմները.
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ»	
Մոդուլի դասիչը	ՍԱԿ 5-11-016
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է տալ գիտելիքներ և կարողություններ սահմանադրական իրավունքի նորմերի և դրանց առանձնահատկությունների, մարդու իրավունքների և ազատությունների, ՀՀ Սահմանադրության, սահմանադրական կարգի հիմունքների, քաղաքական համակարգի ու պետական կառուցվածքի, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման և գործունեության հիմունքների մասին:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Պետության և իրավունքի տեսություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ սահմանադրական իրավունքի առարկան, սահմանադրական իրավունքի նորմերը, Սահմանադրության կառուցվածքը
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է ճիշտ բնորոշել սահմանադրական իրավունքի առարկան, բ. ճիշտ է ներկայացնում «Սահմանադրական իրավունք» և «պետական իրավունք» հասկացությունների կապը, գ. ճիշտ է ներկայացնում «Սահմանադրություն» հասկացությունը, Սահմանադրության իրավական բնույթը, ՀՀ Սահմանադրության և միջազգային-իրավական նորմերի միջև կապը, դ. ճիշտ է ներկայացնում ՀՀ Սահմանադրության ընդունման և փոփոխման կարգը, ե. ճիշտ է ներկայացնում ՀՀ պետականության սահմանադրական բնութագրերը (ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն), զ. ճիշտ է ներկայացնում ՀՀ Սահմանադրության կառուցվածքը, կարողանում գտնել իրեն հետաքրքրող նորմը, մեկնաբանել այն սահմանադրական այլ հոդվածների հետ համակարգային կապերում.
Ուսումնառության արդյունք 2	Բնութագրել սահմանադրական կարգի հիմունքները, թվարկել ու բացատրել դրանց սկզբունքները, իմանալ ՀՀ քաղաքական համակարգը

